

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի
01-ը հուլիսի 2017թ.

Քարտուղար՝ Կ.Հ. Հովսեփյան

Ներկա էին խորհրդի 10 անդամները, ամբիոնի դասախոսներ և աշխատակիցներ: Հրավիրվել էին նաև ԵՊՀ ԻՄ տնօրեն Ս. Ա. Առաքելյանին:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ուսումնական տարվա ամփոփում:

/զեկ. Կ. Հ. Հովսեփյան /

2. Դեկանի տարեկան հաշվետվություն:

/զեկ. Կ. Հ. Հովսեփյան /

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, գիտխորհրդի քարտուղար Կ. Հ. Հովսեփյանը: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Կ. Հ. Հովսեփյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ գիտխորհրդի քարտուղար Կ. Հ. Հովսեփյանը: Զեկուցողը ամփոփեց ուսումնական տարին: Նշվեց, որ 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանն անցկացվել է պատշաճ կարգով, համաձայն հաստատված ժամանակացույցի: Քննաշրջանին մասնակցել է 117 ուսանող: Ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը կազմում է 64.10%. անվճար համակարգում՝ 100%, վճարովի համակարգում՝ 60,22%: Ֆակուլտետում անցկացված բոլոր ստուգարքներն ու քննությունները վերահսկվել են ինչպես ֆակուլտետի ղեկավարության, այնպես էլ ուսումնամեթոդական վարչության կողմից, իսկ մասնագիտական քննությունները գնահատվել են հանձնաժողովի կողմից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Գ. Վ. Գուլակյանը, Ա. Վ. Ցուցուլյանը: Նրանք նշեցին, որ քննաշրջանը անց է կացվել պատշաճ մակարդակով:

ՈՐՈՇԵՑԻՆ- Գնահատել քննաշրջանի արդյունքները բավարար:

Օրակարգի երկրորդ հարցի մասին ֆակուլտետի գիտխորհրդի քարտուղար Կ. Հ. Հովսեփյանը ներկայացրեց դեկանի հաշվետվությունը/ տեքստը կցվում է արձանագրությանը/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ս. Ս. Սիմոնյանը, Հ. Ա. Քամալյանը և ուրիշներ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Գնահատել դեկանի աշխատանքը բավարար:

ԵՂՆ ԻՄ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԴԵԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
/2016-2017 ՈՒՍՏԱՐԻ /
01.06.2017

Բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի ընդլայնված նիստին մասնակցում էին ԵՂՆ Իջևանի մասնաճյուղի տնօրեն Ս.Առաքելյանը, գիտական խորհրդի քարտուղար Մ.Աթոյանը, խորհրդի անդամները, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը և կուրսերի ավագները:

Կ.Հ. Հովսեփյանը ներկայացրեց 2016թ. օգոստոսի քսանութից մինչև այսօր ֆակուլտետում իրականացված գործընթացների վերաբերյալ հաշտվետվություն՝ հիմք ընդունելով մասնաճյուղի զարգացման 2016-2020 թթ. Ռազմավարական ծրագիրը:

Բնական գիտությունների ֆակուլտետում գործում են չորս կրթական ծրագրեր՝ „Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա”, „Ինֆորմատիկա /համակարգչային գիտություն/”, „Աշխարհագրություն” և „Քարտեզագրություն և կադաստրային գործ.։ Սեպտեմբերի մեկի դրությամբ ֆակուլտետը ուներ 128 ուսանող: Նրանցից 22-ը սովորում են պետպատվեր, 3-ը 100 տոկոս փոխհատուցմամբ, իսկ 103-ը վճարովի համակարգում: Աշխատակազմը բաղկացած է 30 աշխատակիցներից, որոնցից 27-ը դասավանդողներ են՝ 19-ը հիմնական, 3-ը ժամավճարային հիմունքներով, իսկ 3-ը վարչական և ուսումնասօժանդակ: Ֆակուլտետի կառուցվածքում կա երկու ամբիոն՝ Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության, Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների, Ընդհանուր ֆիզիկայի, և մասնագիտական համակարգչային երկու լաբորատորիաները:

Մասնաճյուղում ընդունված կարգի համաձայն յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին քննարկվում և հաստատվում են յուրաքանչյուր ստորաբաժանման աշխատանքային պլանները, նրանց իրականացման ժամանակացույցերը՝ հաշվի առնելով ընթացիկ տարվա առանձնահատկությունները: Այս տարի դասավանդողների առջև խնդիր դրվեց ունենալ ուսուցանվող բոլոր մոդուլների առարկայական փաթեթները՝ պորտֆոլյոներ, ինչը հաջողությամբ իրականացրին ֆակուլտետի բոլոր դասախոսները, իհարկե նրանցում կան նաև որոշակի թերություններ, սակայն յուրաքանչյուր ուսումնական տարի նրանք աստիճանաբար կվերացվեն:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են փոխհամագործակցված աշխատանքներ դեկանատի, ամբիոնների և լաբորատորիաների հետ միասին, որը տվել է իր դրական արդյունքը: Ֆակուլտետի անձնակազմի հիմնական նպատակը որակյալ կրթության ապահովումը և գիտելիքի ստեղծումն է, փոխանցումը և բազմաբնույթ իրականացումը:

Մշակվել և իրականացվել են ուսումնական պլանները: Իրականացվել են փոխադարձ դասալսումներ և ակնարկային դասախոսություններ, ինչպես նաև կարդացվել են դասախոսություններ օտար լեզուներով՝ անգլերեն և ռուսերեն: Ամբիոնների կողմից իրականացվել են գիտական զեկուցումներ և սեմինար պարապմունքներ առանձին առարկաներից, որոնք անց են կացվել դասախոսների և ուսանողների կողմից:

Դեկանատը ունի ծրագրային առանձին համակարգ ուսումնական, կարգապահական պրոցեսը վերահսկելու նպատակով:

Յուրաքանչյուր ուսումնական տարի ֆակուլտետի նյութատեխնիկական բազան համալրվում է: 2016-2017 ուս. տարվա ընթացքում ձեռք է բերվել էլեկտրոնային տախտմետր սարքը, որի կիրառմամբ լիարժեք ձևով իրականացվել է „Քարտեզագրություն և կադաստրային գործ.,” մասնագիտության մի շարք առարկաների ուսուցումը, ինչպես նաև այդ սարքը օգտագործվել է ուսումնական և արտադրական պրակտիկաների ժամանակ:

2016-2017 ուստարվա ընթացքում ֆակուլտետում իրականացվել են հետևյալ պրակտիկաները՝ մանկավարժական պրակտիկա – ԻԿՄ III, ուսումնական պրակտիկա-1 – Ա I, ուսումնական պրակտիկա-2 – ՔԿԳ II, ըստ նախտեսված պլանների, իսկ ՔԿԳ-III կուրսի արտադրական պրակտիկան ընթացքի մեջ է:

Ֆակուլտետի գործունեության թափանցիկությունը ապահովելու նպատակով յուրաքանչյուր ստուգարքից և քննությունից անմիջապես հետո գհահատման ամփոփ տվյալները փակցվում են հայտարարությունների տախտակին և տեղադրվում մասնաճյուղի պաշտոնական կայք էջում: Թափանցիկ է իրականացվում նաև ամեն կիսամյակի կրթաթոշակների նշանակումը և զեղչերի

կատարումը, քանզի վերջիններին հատկացումները իրականացնում են ուսանողական կառույցները և ներկայացնում ֆակուլտետի մանդատային հանձնաժողովին:

Կ.Հ. Հովսեփյանը ներկայացրեց 2016-2017 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ստուգարքների և քննությունների արդյունքները /առանց լուծարքային շրջանի/ և նշեց, որ ստուգարքներն և քննությունները անց են կացվել համաձայն հաստատված գրաֆիկի: Քննաշրջանից առաջ ֆակուլտետում եղել է 117 ուսանող, որոնք մասնակցել են քննաշրջանին: Ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը կազմում է 64.10%, անվճար համակարգում-100%, վճարովի համակարգում 60,22%, իսկ ըստ կուրսերի պատկերը հետևյալն է՝ „Աշխարհագրություն” առաջին կուրս /19 ուսանող 100, %/, „ՔԿԳ” երկրորդ կուրս /11 ուսանող 81,82, % /, „ՔԿԳ” երրորդ կուրս /5 ուսանող 80%/, „ԻԿՄ” առաջին կուրս /29 ուսանող 62.07%/, „ԻԿՄ” երկրորդ կուրս /22 ուսանող 81.82%/, „ԻԿՄ” երրորդ կուրս/10 ուսանող 70%/: Գնահատականների սպեկտրը լայն է և որպես կանոն բարձր է մասնագիտական բլոկի առարկաներից և ցածր հումանիտար և ոչ մասնագիտական առարկաներից, մասնավորապես “Հայոց պատմության հիմնահարցեր -2” առարկայից:

Ֆակուլտետում անցկացված բոլոր ստուգարքներն ու քննությունները վերահսկվել են ինչպես ֆակուլտետի ադմինիստրացիայի, այնպես էլ ուսումնամեթոդական վարչության կողմից, իսկ մասնագիտական բոլոր քննությունները գնահատվել են հանձնաժողովի կողմից:

Կ. Հ. Հովսեփյանը տեղեկացրեց, որ “ԻԿՄ ” կրթական ծրագրով ֆակուլտետը տվել է առաջին շրջանավարտները: Ատեստավորման և ավարտական աշխատանքների պաշտպանությանը մասնակցել են 21 ուսանող, որոնք ստացել են հետևյալ արդյունքները.

գերագանց-9 գերագանց-9
լավ-4 լավ-8
բավարար-8 բավարար-4

2016-17թթ. ուստարվա II կիսամյակում կուրսային աշխատանք էր նախատեսված ,Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկատե մասնագիտության III կուրսում: Կազմակերպվել և անց է կացվել կուրսային աշխատանքների պաշտպանությունը: Արդյունքները հետևյալն է.

գերագանց-3,

լավ-3,

բավարար-4

ԴԵԿԱՆԻ Ժ/Պ

Կ. Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ